

205 Նա զայս թէպէտ խորհէր յողջ կէտ,
Այլ բղբաղմունք նորին յաւէտ
Չայս մըտածումն իւր փրկուէտ
Արգելէին՝ դործեալ անպէտ:

206 Բաց յարգելաց նորին զբաղմանց,
Տեւեալ մարտն իսկ Տաճկաց Ռուսաց՝
Խափան լինէր իւրոց խոկմանց
Թող զանվաճառ կաշն իւր գրբեանց:

207 Այլ բաղմիցս իսկ նա յորդորիւր
Յինէն, յայլոց յորոց սիրիւր
Առ խրղել լարն՝ որով կապիւր
Դիւրեւ անդրէն խիղճ մըտաց իւր:

208 Ուստի դարձեալ խորհրդածէր,
Չելիցն անտի ճարն որոնէր,
Չիւրոց գրբեանց վաճառ դիւրէր,
Եւ զբղբաղմունս իւր նուաղէր:

209 Եւ զայս խորհուրդ իւրոյն մըտաց
Յայտնէր յայս ամ իւր մըտերմաց,
Յորոց օգտիւր ըստ իւր կամաց,
Եղեալ ինքն է՝ իւրք ողջ լըռակաց:

210 Ապայ ձօնեալ քեռց իւր Սարգիս
Ըզտան իւրոյ կահ կարասիս՝
Փոխէր զինչս իւր ի ձոյլ օսկիս,
Որ պաշարն էր նորին յաստիս:

211 Որոյ յետոյ գրտեալ ինչ լաստ
Ի Մարտիլիայ նաւօղ պատրաստ,
Ինեւ հանդերձ դաղտ բայց բղբաստ,
Նաւէր հողմով յոյժ բարեբաստ: